ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«26» 07 2023թ.
No 006758

«ՍԿԱՐԼԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԻՇԽԱՆ ՉԱՐԽՉՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Մարգարյան 2Ն. 10-15)

Հարգելի՛ պարոն Չարխչյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի հուլիսի 25-ի ««Նոյան Տապան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի օգոստոսի 2-ի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը վերսկսելու մասին» թիվ 349-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «4» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Զարուհի Մելքումյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (240)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 15 օգոստոսի 2023 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2023 թվականի թիվ 349-Ա

«ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի հուլիսի 25-ի նիստում, քննարկելով «Նոյան Տապան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) 2019 թվականի օգոստոսի 2-ի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**) վերսկսելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Ընկերությունը 2019 թվականի օգոստոսի 2-ին Հանձնաժողով է ներկայացրել դիմում (այսուհետ նաև՝ **Դիմում**)՝ հայտնելով, որ Ընկերությունը 2000 թվականից Եվրոպայում կազմակերպում և իրականացնում է «DAN MARK» ապրանքային նշանով տետրերի տպագրությունը: Ընկերության կողմից արտադրվող տետրերի դիզայնի և վաճառքի հեղինակային բացառիկ իրավունքը պաշտոնապես պատկանում է Ընկերությանը, որը 2018 թվականի օգոստոսի 13-ին գրանցված «ՏԵՏՐ» անվանումով համակցված ապրանքային նշանի իրավատերն է:

Դիմումի համաձայն՝ ՀՀ փոքր շուկայի առկայության պայմաններում վաճառքում նկատվում և մշտապես բացահայտվում են «կեղծված» դիզայնով տետրեր, որոնք ներմուծվում են ԱՊՀ երկրներից /ՌԴ/ կամ արտադրվում են Հայաստանում: Ընկերությունը 2018 թվականից պայքարում է կոնտրաֆակտ արտադրանքի դեմ: Մասնավորապես, «Սկարլետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Սկարլետ» ընկերություն**) կողմից արտադրվում է տետրի տեսակ, որը ճիշտ կրկնում է հեղինակային իրավունքով ամրագրված տետրի ֆունկցիոնալ բնութագրերը՝ կազմի գունային երանգը, ստվարաթղթի ֆակտուրան (արտաքին մակերեսի մշակվածության դիզայնը), ինչպես նաև տետրի ճակատային անվանման, լրացման ուղղանկյան կրեմագույն երանգը, դիտավորության միտումով շփոթություն առաջացնում սպառողների շրջանում:

Բացի այդ, Ընկերությունը նշել է, որ բազմիցս գրությամբ տեղեկացրել է «Սկարլետ» ընկերության տնօրինությանը, որ խախտում է Ընկերության հեղինակային իրավունքները, սակայն այն մնացել է անպատասխան: Ստեղծված իրավիճակը հանգեցնում է անբարեխիղճ մրցակցության, խոչընդոտում ազատ տնտեսական մրցակցության պաշտպանությանը, ստեղծում կեղծիքի, որակի խեղաթյուրման, խաբեության մթնոլորտ, խոչընդոտում բարձրորակ տետրերի սպառմանը, դրանով իսկ վնասում, վտանգի տակ դնում սպառողների շահերը, ինչպես նաև խախտում է սպառողների շրջանում բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները: Ըստ Ընկերության, նշված պատկերը անարդարացի կերպով առաջացնում է մրցակցային անհավասար պայմաններ, ինչի հետևանքով Ընկերությունը կրում է ֆինանսական զգալի վնասներ:

Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին ձեռնարկել համապատասխան միջոցներ, ինչպես նաև Դիմումին կից ներկայացրել է Ընկերության կողմից արտադրված 12 թերթանի մուգ դարչնագույն տետրի նմուշ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ Ընկերության՝ 2019 թվականի օգոստոսի 2-ի դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի օգոստոսի 7-ի «Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ» թիվ 92-Ա հրամանի հիման վրա «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մոտ՝ ք. Երևան, Մաշտոցի 5 հասցեում իրականացվել է հսկիչ գնում: Հսկիչ գնմամբ ձեռք է բերվել «Սկարլետ» ընկերության կողմից արտադրված, 12 թերթանոց տետր՝ 70 դրամ արժեքով:

Բացի այդ, վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը՝ Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի՝ 2019 թվականի օգոստոսի 7-ի թիվ ԱՎ-1651 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ԱՎ-1651 գրություն**) դիմել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությանը (այսուհետ նաև՝ **Գործակալություն**)՝ խնդրելով տրամադրել Ընկերության և «Սկարլետ» ընկերության անվամբ գրանցված և ՀՀ-ում իրավական պահպանության ենթակա բոլոր ապրանքային նշանների վկայականների պատճենները:

Գործակալությունը, ի պատասխան թիվ ԱՎ-1651 գրության, հայտնել է, որ Ընկերության անունով գրանցված են թիվ 6837 (գրանցման թվական՝ 01.07.2002), թիվ 27762 (գրանցման թվական՝ 13.08.2018) հերթական գրանցման համարներ ունեցող ապրանքային նշանները (կցելով՝ ապրանքային նշանների պետական գրանցամատյանից քաղվածքները, ինչպես նաև ապրանքային նշանների գրանցման վկայագրերի պատճենները): Գործակալությունը հայտնել է նաև, որ Գործակալությունում «Սկարլետ» ընկերության անունով ապրանքային նշաններ գրանցված չեն:

Գործակալության կողմից ներկայացված ապրանքային նշանների գրանցման վկայագրերի պատճենների ուսումնասիրությունից պարզվել է, որ Ընկերությունը 2018 թվականի օգոստոսի 13-ին գրանցել է «Տետր» անվանումով (հերթական համար՝ 27762) պատկերային ապրանքային նշանն ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) 16-րդ (տետրեր) դասում: Ապրանքային նշանը պահպանվում է մուգ դարչնագույն, բեժ, կարմիր, կապույտ և սև գունային համակցությամբ, իսկ ապրանքային նշանում բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

2019 թվականի սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած Հանձնաժողովի դռնբաց նիստի ընթացքում քննարկվել են Վարույթի փաստական հանգամանքները, որի շրջանակներում պարզ է դարձել, որ «Սկարլետ» ընկերությունը 2018 թվականի հոկտեմբերի 19-ին հայտ (հայտի համար՝ թիվ 20181630) է ներկայացրել Գործակալություն՝ Ընկերության կողմից վիճարկվող՝ Ընկերության՝ թիվ 27762 գրանցման համարով գրանցված ապրանքային նշանին հնարավոր շփոթության աստիճանի նման տետրի արտաքին տեսքը՝ որպես ապրանքային նշան գրանցելու համար, սակայն Գործակալությունը մերժել է ներկայացված հայտը՝ պատճառաբանելով, որ «Սկարլետ» ընկերության կողմից հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճանի նման է ԱԾՄԴ 16-րդ դասի ապրանքների համար Ընկերության անվամբ թիվ 27762 գրանցման համարով գրանցված ապրանքային նշանին: Պարզվել է նաև, որ «Սկարլետ» ընկերությունը 2019 թվականի մարտի 4-ին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան (դատական գործ՝ թիվ ՎԴ/1445/05/19)՝ «Սկարլետ» ընկերության կողմից թիվ 20181630 հայտով ներկայացված ապրանքային նշանը գրանցելուն պարտավորեցնելու պահանջով:

Հաշվի առնելով, որ թիվ ՎԴ/1445/05/19 վարչական գործով կայացվելիք վերջնական դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ Հանձնաժողովի կողմից Վարույթի արդյունքում որոշման կայացման համար՝ Հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 133-Ա որոշմամբ Վարույթը կասեցվել է:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2023 թվականի հունիսի 21-ի թիվ 005528 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն**) Հանձնաժողովը դիմել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ խնդրելով հայտնել, արդյո՞ք թիվ ՎԴ/1445/05/19 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2023 թվականի ապրիլի 27-ի որոշումը մտել է ուժի մեջ: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, ի պատասխան Գրության, 2023 թվականի հուլիսի 12-ի գրությամբ հայտնել է, որ թիվ ՎԴ/1445/05/19 վարչական գործով Ընկերության վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2023 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ բավարարվել է մասնակիորեն, թիվ ՎԴ/1445/05/19 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի մարտի 9-ի վճիռը բեկանվել է և վարչական գործի վարույթը կարճվել է: Միաժամանակ, 2023 թվականի հուլիսի 3-ի դրությամբ գործով վճռաբեկ բողոք ներկայացված լինելու վերաբերյալ տվյալներ առկա չեն, իսկ վարչական գործում կատարված գրառման համապատասխան դատական ակտը 2023 թվականի մայիսի 30-ից մտել է օրինական ուժի մեջ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո:

Վերոգրյալ նորմի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վարույթի կասեցման հիմքերը վերանալու դեպքում կասեցված վարույթն ենթակա է վերսկսման:

Հաշվի առնելով, որ թիվ ՎԴ/1445/05/19 վարչական գործով եզրափակիչ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, այսինքն՝ Վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքը վերացել է՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթն անհրաժեշտ է վերսկսել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով, իրավահարաբերության ծագման պահին գործող «Տնտեսական մրցակցության

պաշտպանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով, 30-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերսկսել «Նոյան Տապան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի օգոստոսի 2-ի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2023 թ. հուլիսի 25
Երևան